# ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապրիլ 2023

# <-25

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ 7 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ----------2
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ԼԳԲՏՔԻ+ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ----------3
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՍՏԱՑԵԼ Է ԿԱՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ----------4
ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ ԼԳԲՏՔԻ+ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ----------5
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ՄՇԱԿԵԼ Է ԻՐ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ----------6
ԼԳԲՏԻՔ+ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԸ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԱՐՇԱՎ----------7
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՀԿ-Ի ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆՈՒՄ ԱՌԿԱ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՐՏ----------8
ՓԵՏՐՎԱՐԻ ՄԵԿԻՑ ՄԻՆՉ ԵՎ ՄԱՐՏԻ ԵՐԵՍՈՒՆՄԵԿՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ի ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔ ԱՅՑԵԼԱԾ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ----------9
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ՄՇԱԿԵԼ Է «ԻՄԱՑԻՐ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ» ԽԱՂԸ՝ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ----------10
ՄԵՆՔ ԿԱՆՔ, ՄԵՆՔ ՏԵՍԱՆԵԼԻ ԵՆՔ, ՄԵՆՔ ՈՒԺԵՂ ԵՆՔ/ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԱԳԱՅԻՆ ՕՐ 2023 ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀՈԼՈՎԱԿ----------11
LE SOIR ԱՄՍԱԳԻՐ, «ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԼՈՒՌ ՊԱՅՔԱՐԸ»----------12
ԱՊՐԻԼ 26 ԼԵՍԲԻՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԱԳԱՅԻՆ ՕՐ----------13
ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՐԻԹՐԻԹ----------14

## «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏ ԱՄՍՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ՀԵՏԵՎՅԱԼ 7 ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Մարտի 1-ին «Զրո խտրականության օր» համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 13 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Մարտի 3-ին «Ընտանեկան բռնություն» թեմայով իրավաբանական խորհրդատվությանը մասնակցել է թվով 18 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Մարտի 10-ին «Կոնֆլիկտ միջանձնային հարաբերություններում» թեմայով Իրավունքի Կողմ ԻՀԿ-ի հոգեբանի հետ խմբային հանդիպմանը մասնակցել է թվով 12 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Մարտի 15-ին «Վերարտադրողական առողջություն / ՍՃՓՎ (Սեռական Ճանապարհով Փոխանցվող Վարակներ) / ՄԻԱՎ / ՁԻԱՀ» Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ ՀԿ-ի սոց. աշխատողի և հոգեբանի մասնակցությամբ համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 22 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Մարտի 23-ին «Սեռ, սեռական կողմնորոշվածություն, գենդեր, գենդերային ինքնություն» թեմայով համայնքային հանդիպմանը մասնակցել է թվով 13 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

Մարտի 30-ին «Սթրես, սթրեսի կառավարում, արտ-թերապիա» Իրավունքի Կողմ ԻՀԿ-ի հոգեբանի հետ, խմբային հանդիպմանը մասնակցել է թվով 12 Տրանս և ԼԳԲԻՔ+, սեքս աշխատող անձինք և համակիրներ:

**«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ն մարտ ամսվա ընթացքում ընդունել է թվով 202 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձ, որոնք օգտվել են կազմակերպության կողմից իրականացվող հոգեբանական, իրավաբանական, կրթական և տեղեկատվական, սոցիալական ծրագրերի շրջանակներում տրամադրվող ծառայություններից:**

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ԻՐԱԿԱՆԱՑՐԵԼ Է ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ ԼԳԲՏՔԻ+ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Այս տարվա մարտ ամսին Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության ֆինանսավորմամբ Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ն մեկնարկեց նոր ծրագիր, որի նպատակն էր Հայաստանում ԼԳԲՏՔԻ+ երիտասարդներին տրամադրել անհրաժեշտ հմտություններ՝ իրենց համայնքներում կայուն փոփոխություններ իրականացնելու համար: Ծրագրի շրջանակում Իրավունքի Կողմ ՀԿ-ն կազմակերպեց դասընթաց, որին մասնակցում էին 18-30 տարեկան 20 ԼԳԲՏՔԻ+ երիտասարդներ Երևանից և ՀՀ տարբեր մարզերից:

Դասընթացի ընթացքում մասնակիցները ստացան բոլոր այն հմտություններ, որոնք անհրաժեշտ են գենդերային բռնության դեմ պայքարելու, սոց ցանցերում ատելության խոսքի դեմ առցանց և օֆլայն ակտիվիզմ իրականացնելու ու արշավներ վարելու, ատելության հանցագործություններից ու խտրականությունից պաշտպանվելու, մարդու իրավունքների խախտման դեպքերը կանխելու համար: Մասնակիցները ծրագրի շնորհիվ ձեռք բերեցին նախագծային գաղափարներ մշակելու ունակություն՝ նախագծերը սկզբից մինչև վերջ տանելու և երկարաժամկետ արդյունքների հասնելու համար, զարգացրեցին առաջնորդության ու պատասխանատու որոշումների կայացնելու հմտությունները, ինչպես նաև սովորեցին չափել իրենց նախագծերի արդյունավետությունը և, անհրաժեշտության դեպքում, վերափոխել ռազմավարությունները:

Ծրագրի արդյունքներից են մասնակիցների կողմից կազմված գործողությունների պլանը և մարդու իրավունքների և գենդերային հիմքով խախտումների կանխարգելման վերաբերյալ քարտային խաղի ստեղծումը:

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ի ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՄԲ ԻՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՍՏԱՑԵԼ Է ԿԱՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ

2022 թ-ի դեկտեմբերի 20-ին Իրավունքի Կողմ Իրավապաշտպան ՀԿ-ին էր դիմել Իրանի քաղաքացի Ֆ.Ս .-ն և հայտնել, որ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության պետը իր կացության ժամանակավոր կարգավիճակը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ որոշում է կայացրել:

Գործի ուսումնասիրությունից պարզվեց, որ սույն գործով 2022 թ-ի դեկտեմբերի 14-ին նշանակվել էր վարչական լսում, որի ծանուցումը Ֆ.Ս-ին հանձնվել էր փոստային առաքման միջոցով 2022թ-ի դեկտեմբերի 19-ին, այսինքն, նշանակված վարչական լսումից 5 օր անց: Իսկ 2022թ-ի դեկտեմբերի 15-ին կայացվել է որոշում՝ Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ֆ.Ս.-ին տրամադրված կացության կարգավիճակը ուժը կորցրած ճանաչելու մասին, որը Ֆ.Ս.-ին է հանձնվել փոստային առաքման միջոցով դեկտեմբերի 26-ին: Այսինքն, Ֆ.Ս.-ն պատշաճ չի ծանուցվել վարչական վարույթի մասին և հնարավորություն չի ունեցել վարույթի ընթացքում իրացնելու իր իրավունքները, այնինչ «Վարչական հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի պահանջն է, որ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ, և վարչական մարմինը չի ապահովել Ֆ.Ս.-ի լսված լինելու իրավունքը:

Կազմակերպության փաստաբանների կողմից կազմվեց ՀՀ ներքին գործերի նախարարին ուղղված բողոք: Միևնույն ժամանակ Ֆ.Ս.-ին ուղղորդվեց նոր հիմքերով դիմել իրավասու մարմնին՝ կացության կարգավիճակ սատանալու համար: Արդյունքում, ՀՀ ոստիկանության և անձնագրերի վարչության 2022 թ-ի դեկտեմբերի 15-ի որոշումը մնաց անհետևանք, իսկ նոր հիմքերով Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի Ֆ.Ս.-ին 2023 թ-ի մարտի 22-ին տրամադրվեց կացության քարտ՝ մեկ տարի ժամկետով:

# ԻՐԱԿԱՆԱՑՎԵՑ ԼԳԲՏՔԻ+ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՌՕՐՅԱ ԴԱՍԸՆԹԱՑ

Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն «Human Rights Campaign»-ի ֆինանսական աջակցությամբ կազմակերպել էր «Պաշտպանում ենք մեր իրավունքները» թեմայով եռօրյա դասընթաց՝ աջակցելու և հզորացնելու ՀՀ տարբեր մարզերում բնակվող ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստներին՝ նպատակ ունենալով մասնակիցներին տրամադրել հմտություններ և գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են Հայաստանում ԼԳԲՏՔԻ+ անձանց իրավունքներն առաջ մղելու համար:

Դասընթացը ներառում էր մի շարք թեմաներ, այդ թվում՝ հաղորդակցման հմտությունները և արդյունավետ շահերի պաշտպանության ռազմավարությունը: Մասնակիցները ծանոթացան հաղորդակցության հիմնական դրույթներին, տեսակներին, դրանց ազդեցությանը և արդյունավետ հաղորդակցման սկզբունքներին: Նրանք նաև տեղեկատվություն ստացան հաղորդակցման խոչընդոտների մասին, որոնց հաճախ են ԼԳԲՏՔԻ+ անձինք բախվում և սովորեցին՝ ինչպես ձևավորել արդյունավետ փոխհարաբերություններ իրենց թիրախային լսարանի հետ, ձեռք բերել հավատ և վստահություն:

Բացի այդ, մասնակիցներն ուսումնասիրեցին շահերի պաշտպանության հաջողված արշավները և տեղեկացան այն քայլերի մասին, որոնք պետք է նախաձեռնել և իրականացնել հաջողության հասնելու համար: Կարևորություն տրվեց հիմնական խնդիրների բացահայտման, ռեսուրսների մոբիլիզացման և պաշտպանության ջանքերի ազդեցության գնահատման ունակությունների ձևավորմանը: Քննարկվեցին նաև շահերի պաշտպանության ռազմավարությունները, մարտավարությունը և գործիքները, համայնքների մոբիլիզացումը և ցանցերի ստեղծումը այդ աշխատանքների ընթացքում հաջողության հասնելու համար:

Դասընթացի արդյունքում մասնակիցները նախաձեռնել են մի շարք գործողություններ իրենց համայնքներում՝ աշխատելով լուծել համայնքի առջև ծառացած խնդիրները:

Այս դասընթացի շնորհիվ մենք կարողացել ենք մեկ քայլով առաջ մղել Հայաստանում ԼԳԲՏՔԻ+ անձանց իրավունքների պաշտպանությունը:

# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ՄՇԱԿԵԼ Է ԻՐ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կոռուպցիան մարտահրավեր է, որին բախվում են բազմաթիվ հասարակություններ, և Հայաստանը նույնպես բացառություն չէ: Կանանց Գլոբալ հիմնադրամի աջակցությամբ Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ի գրասենյակում տեղի ունեցավ հանդիպումների շարք, որը համախմբել էր կազմակերպության աշխատակազմին և խորհրդի անդամներին:

Դասընթացը կենտրոնացած էր կոռուպցիայի տարբեր ասպեկտների վրա, ներառյալ՝ ինչպես բացահայտել կոռուպցիան, հասարակության վրա կոռուպցիայի բացասական ազդեցությունը և թափանցիկության ու հաշվետվողականության կարևորությունը: Մասնակիցներին ներկայացվեցին նաև կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի տարբեր գործիքներն ու մեթոդները:

Իրավունքի Կողմ ՀԿ-ի մոտեցումներում մշտապես առանցքային է եղել ցանկացած տիպի կոռուպցիայի բացառումը, և այս հանդիպումների ընթացքում նախորդ քաղաքականության քննարկման և վերանայումների միջոցով հանդիպման մասնակիցները մշակեցին կազմակերպության նոր հակակոռուպցիոն քաղաքականությունը: Քաղաքականությունը համապարփակ փաստաթուղթ է, որը ներառում է գործողությունների ծրագիր, որը նախանշում է կոնկրետ քայլեր, որոնք կազմակերպությունը կձեռնարկի կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի համար: Դասընթացի ընթացքում քննարկվեց նաև, որ տրանս անձինք հաճախ կոռուպցիայի թիրախ են հանդիսանում, և մշակվեց հատուկ ռազմավարություն՝ դրանից խուսափելու և տրանս անհատներին աջակցելու համար:

Բացի հակակոռուպցիոն վերապատրաստման դասընթացից, մասնակիցները ծրագրի ընթացքում վերանայել է նաև կազմակերպության տարբեր քաղաքականությունները և ռազմավարական պլանը: Իրավունքի Կողմ ՀԿ-ն կարևորում է կոռուպցիայի բացառմամբ վստահությանը, ազնիվության, բարեխիղճության և պատասխանատվության վրա հիմնված հասարակության կառուցումը, և այս հանդիպումների շարքը ևս մի քայլ էր նոր մարտահրավերներին դիմակայելու և կազմակերպության գործունեությունը արդյունավետ շարունակելու ճանապարհին:

# ԼԳԲՏԻՔ+ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԸ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՒՄ ԵՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԱՐՇԱՎ

Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ն իրականացնում է «Հայաստանում ԼԳԲՏԻՔ+ անձանց իրավունքների և բարեկեցության խթանում» ծրագիրը, որը ֆինանսավորվել է Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության կողմից և նպատակ ունի բարձրացնել իրազեկվածությունը Հայաստանում շարունակական խտրականության և մարգինալացման ենթարկված ԼԳԲՏԻՔ+ համայնքի իրավունքների վերաբերյալ:

Ծրագրի ընթացքում «Գործողությունների միջոցով մարտահրավեր նետենք խոցելիությանը» դասընթացի մասնակիցները մշակել են հատուկ պաստառներ՝ «Ես ունեմ ՔՌ օգնության կարիքը» թեմայով, որոնք բաժանվելու են ոստիկանության աշխատակիցներին Երևանում և ՀՀ մարզերում: Պաստառների նպատակն է բարձրացնել ոստիկանների տեղեկացվածությունը ԼԳԲՏԻՔ+ համայնքի կարիքների և մարտահրավերների վերաբերյալ և խրախուսել նրանց՝ ցուցաբերել պատշաճ աջակցություն և պաշտպանություն ԼԳԲՏԻՔ+ համայնքի անդամներին:

ԼԳԲՏԻՔ+ անձինք ոստիկանություն դիմելիս հաճախ իրենք իրենց ապահով չեն զգում, քանի որ բախվում են խտրականության ոստիկանների կողմից, նրանց բողոքներին պատշաճ ընթացք չի տրվում: Իրավապահ մարմինների անգործությունը ԼԳԲՏԻՔ+ անձանց պարագայում հանգեցնում է անպատժելիության մթնոլորտի ձևավորման և իրավունքների ոտնահարման: Կարևոր է, որ ոստիկանությունը առաջնահերթություն տա ԼԳԲՏԻՔ+ համայնքի անդամների նկատմամբ բռնությունների կանխարգելմանը, ինչպես նաև ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ բռնությունները փաստագրի որպես ատելության հիմքով հանցագործություն՝ պայմանավորված սեռական կողմնորոշմամբ կամ գենդերային ինքնությամբ:

Աշխատելով ոստիկանության հետ և բարձրացնելով ԼԳԲՏԻՔ+ համայնքի իրազեկվածության մակարդակը՝ ծրագրի մասնակիցները հույս ունեն ստեղծել ավելի ապահով և ներառական միջավայր բոլոր խոցելի խմբերի համար:

19 ԻՐԱՎԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՈՐԾԵՐ

02 ՄԻԵԴ-ՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

06 ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾԵՐ

11 ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈՒԼՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԳՈՐԾԵՐ

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Իրավունքի կողմ» ԻՀԿ-ի իրավաբանական բաժնում առկա գործերի վերաբերյալ

ՄԱՐՏ

01 ԱՎԱՐՏՎԱԾ ԳՈՐԾ

26 ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

02 ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

05 ՔՆՆՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

12 ՆՈՐ ԴԻՄՈՒՄՆԵՐ

**ՁԵՁ ԵՆՔ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ ՓԵՏՐՎԱՐԻ ՄԵԿԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԱՐՏԻ ԵՐԵՍՈՒՆՄԵԿՆ ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ի ԱՊԱՀՈՎ ՏԱՐԱԾՔ ԱՅՑԵԼԱԾ և ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՕԳՏՎԱԾ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ:**



# ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ ՀԿ-Ն ՄՇԱԿԵԼ Է «ԻՄԱՑԻՐ ՔՈ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ» ԽԱՂԸ՝ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆԸ

Իրավունքի Կողմ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը Տրանս և ԼԳԲԻՔ համայնքում բարձրացնելու նպատակով ստեղծել է «Իմացիր ՔՈ իրավունքները» քարտային խաղը: Խաղը հնարավոր է դարձել Միացյալ Նահանգների Գերմանական Մարշալ Հիմնադրամի և Սևծովյան Վստահության կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Խաղի նկարագիրը
Յուրաքանչյուր խաղաքարտի վրա վերևի հատվածում նշված է մարդու իրավունքների 30 հոդվածներից մեկը, իսկ ներքևում մի իրադարձության նկարագրություն: Խաղը սկսելու համար խաղացողներից մեկը պատահականության սկզբունքով վերցնում է քարտ և կարդում է ներքևում գրված պատմությունը, իսկ խաղընկերը դրա հիման վրա պետք է պատասխանի, թե որ հոդվածի մասին է խոսքը: Խաղը կարելի է խաղալ երկուսով կամ զույգերով Իրավունքի Կողմ ՀԿ-ի համայնքային անվտանգ տարածքում:

«Իմացիր ՔՈ իրավունքները» քարտային խաղը ստեղծարար և մասնակցային միջոց է՝ բարձրացնելու մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկվածությունը: Կարևոր է խտրականության ենթարկված համայնքների ներկայացուցիչներին ներգրավել իրենց իրավունքների մասին իրազեկվածության ձևավորման գործում, քանի որ այս կերպ խաղը դառնում է ոչ միայն կրթական գործիք, այլ նաև Տրանս և ԼԳԲԻՔ երիտասարդների համար իրենց իրավունքների պաշտպանության գործում ավելի ակտիվ դեր ստանձնելու միջոց:

Խաղի հեղինակային իրավունքները պաշտպանված են և պատկանում են Իրավունքի Կողմ ՀԿ-ին

B | S | T The Black Sea Trust for Regional Cooperation
A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

**Իմացիր ՔՈ իրավունքները**

## ՄԵՆՔ ԿԱՆՔ, ՄԵՆՔ ՏԵՍԱՆԵԼԻ ԵՆՔ, ՄԵՆՔ ՈՒԺԵՂ ԵՆՔ/ՏՐԱՆՍ ԱՆՁԱՆՑ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԱԳԱՅԻՆ ՕՐ 2023 ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ

Սույն տեսանյութում ներկայացվում է 2023 թվականի մարտի 31-ին՝ Տրանս Անձանց Տեսանելիության միջազգային օրը, Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ի կողմից կազմակերպված «Ատելության հիմքով հանցագործությունները և մարդու իրավունքների այլ խախտումները ԼԳԲՏԻՔ+ անձանց նկատմամբ Հայաստանում» թեմայով կլոր-սեղան քննարկումը, որի ընթացքում բարձրաձայնվել են Տրանս անձանց հիմնախնդիրները, համայնքի նկատմամբ խտրականության կանխարգելմանն ու համայնքի ներկայացուցիչների կյանքի որակի բարձրացմանը ուղղված քայլերը:

Սույն տեսանյութը պատրաստվել է Իրավունքի Կողմ իրավապաշտպան հասարակական կազմակերպության կողմից Աստրեան Հանուն Արդարության Լեսբիների հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ:

Սույնի բովանդակությունը և արտահայտված տեսակետները պատկանում են Իրավունքի Կողմ ՀԿ-ին և կարող են չհամընկնել Աստրեան Հանուն Արդարության Լեսբիների հիմնադրամի տեսակետների հետ:

## LE SOIR ԱՄՍԱԳԻՐ, «ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ԼՈՒՌ ՊԱՅՔԱՐԸ»

Բելգիական Le Soir թերթի լրագրող Վինսիան Մոշլերը հարցազրույց է իրականացրել Իրավունքի Կողմ իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի հետ՝ «Հայ կանանց լուռ պայքարը» հոդվածի շրջանակներում, որը հրապարակվել է երկուշաբթի՝ ապրիլի 24-ին: Հոդվածը կենտրոնանում է, թե ինչ ազդեցություն է ունեցել հայ-ադրբեջանական հակամարտությունը ընտանեկան բռնության զոհ դարձած կանանց վրա՝ ոլորտում գործող կազմակերպությունների ներկայացուցիչների և ակտիվիստների հետ զրույցների միջոցով:

# ԱՊՐԻԼ 26 ԼԵՍԲԻ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԱԳԱՅԻՆ ՕՐ

Ապրիլի 26-ն ամեն տարի նշվում է որպես Լեսբի անձանց տեսանելիության օր: Այն ուղղված է լեսբի մշակույթի և ԼԲՏԻՔ անձանց տեսանելիության բարձրացմանը և լեսբի անձանց առջև ծառացած խնդիրների վեր հանելուն: Պատմականորեն, լեսբի անձինք կարևոր դեր են խաղացել ֆեմինիստական շարժման մեջ՝ օգնելով հասնել արդարության աշխատավայրերում, տանը և դատարաններում և այլնուր:

Այս տարի Իրավունքի կողմ իրավապաշտպան ՀԿ-ն համայնքային ապահով տարածքում կազմակերպել էր ֆիլմի դիտում-քննարկում՝ նշելու Լեսբիների տեսանելիության օրը: Կինոդիտումից հետո նաև քննարկում ծավալվեց՝ նվիրված Հայաստանում լեսբի անձանց առջև ծառացած կարևոր խնդիրներին և մարտահրավերներին: Քննարկման առանցքում էր, թե ինչպես Իրավունքի կողմ ՀԿ-ն և ոլորտում գործող մյուս կազմակերպությունները կարող են նպաստել խտրականության կանխելուն և լեսբի համայնքի զարգացման համար միջավայր ստեղծելուն:
Իրավունքի կողմ ՀԿ-ն շնորհավորում է Լեսբիների Տեսանելիության միջազգային օրը և համերաշխություն հայտնում բոլոր լեսբի անձանց՝ ընդգծելով բազմազանության ճանաչման կարևորությունը:

# ՍԵՔՍ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՐԻԹՐԻԹ

Իրավունքի կողմ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը սույն թվականի ապրիլին Կարմիր Հովանոց ֆոնդի ֆինանսական աջակցությամբ կազմակերպել էր վերականգնողական ռիթրիթ՝ Երևանում և ՀՀ տարբեր մարզերում բնակվող սեքս աշխատող համայնքի ներկայացուցիչների համար: Հանգստի ընթացքում տեղի ունեցան նաև խմբային հանդիպում-զրույցներ, որոնք վարում էր Իրավունքի կողմ ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը:

Հայաստանում բազմաթիվ սեքս աշխատողներ բախվում են այնպիսի մարտահրավերների, ինչպիսիք են խարանը, խտրականությունը, բռնությունը, շահագործումը, ինչի պատճառով հաճախ զգում են նաև սթրեսի և անհանգստության բարձր մակարդակ: Սեքս աշխատողների կյանքի որակի բարձրացման և վերականգնման անհրաժեշտ բաղադրիչներից է համայնքի աջակցությունը, այդ իսկ պատճառով Իրավունքի կողմ ՀԿ-ն նախաձեռնել էր այս վերականգնողական ռիթրիթը, որի ընթացքում մասնակիցները հնարավորություն ստացան բնության գրկում ժամանակ անցկացնել, լիցքաթափվել և շփվել միմիյանց հետ:
Ողջույնի խոսքից հետո մասնակիցները ծանոթացան իրար հետ, տարատեսակ խաղերի միջոցով ավելի մտերմացան ու ձևավորվեցին փոխադարձ վստահության մթնոլորտ, ինչը հնարավորություն տվեց զույգերով թերապիա իրականացնել, բարձրաձայնել հիմնական խնդիրների մասին, խոսել տրավմաներից, խարանից, բռնության դեպքերից: Քննարկվեց, թե ինչպես ինքնավերականգնվել, կարգավորել հարաբերությունները շրջապատի և ընտանիքի անդամների հետ, ձևավորել փոխօգնության խմբեր և իրականացնել համայնքի հզորացմանն ուղղված գործողություններ: Այս օրերի ընթացքում մասնակիցները նաև լրացրեցին բազմաթիվ հոգեբանական թեստեր, ինչի շնորհիվ բացահայտումներ արեցին իրենց մասին:

*Միասին մենք ձգտում ենք, որ Հայաստանում ՍԵՔՍ աշխատողները օգտվեն մարդու հիմնարար իրավունքներից և արժանապատվությունից:*

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFENDER NGO

RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

RightSideNGO

RightSideNGO

RightSideNGO

+374 - 11 - 880 - 770

©Copyright All Rights Reserved For Right Side Ngo.